



**AFIC**

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»

---

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

---

Համառոտ ուսուցողական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ – 2004

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| Ներածություն   | 3  |
| 1. Բաժնետիրական ընկերություններ  | 4  |
| 2. Բաժնետերերի իրավունքները  | 5  |
| 3. Փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանությունը                      | 6  |
| 4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (որոշումների ընդունման և քվեարկության կարգը) | 8  |
| 5. Ընկերության Խորհուրդը և նրա ընտրությունները   | 10 |
| 6. Ընկերության Վերստուգող Հանձնաժողովը   | 13 |
| 7. Ընկերության Գործադիր մարմինը  | 13 |
| 8. Տեղեկությունների հրապարակում  | 14 |
| 9. Խոշոր գործարքներ  | 16 |
| 10. Շահագրգռվածություն գործարքներում   | 17 |
| 11. Շահաբաժինների վճարման կարգն ու սահմանափակումները                                     | 18 |
| 12. Ընկերության բաժնետերերի ռեեստրը  | 19 |

## Ներածություն

Մույն ձեռնարկի հիմնական նպատակը բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի և ընթերցողների լայն շրջանում կորպորատիվ կառավարման, այսինքն՝ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ և հաշվետու կառավարումն ապահովող կազմակերպչական մեխանիզմների կարևոր սկզբունքների և հիմնադրույթների ներկայացումն է: Նրանք կձանոթանան կորպորատիվ կառավարման հարցերում գործածվող հիմնական տերմինների և սկզբունքների հետ, ինչպիսիք են, օրինակ, բաժնետիրական ընկերությունները, բաժնետերերը և նրանց իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմները, բաժնետերերի ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը և նրա իրավասությունները, բաժնետիրական ընկերության գործադիր կառավարումը, վերաստուգող հանձնաժողովը և այլն: Ձեռնարկի ուսումնասիրության ժամանակ կբացահայտվեն բաժնետիրական ընկերություններում շահաբաժինների վճարման կարգի և քաղաքականության, խոշոր գործարքների և շահագրգռվածության առկայությամբ գործարքների դեպքերի մասին:

Արժարժված հարցերի քննարկման նպատակն է օգնել՝

- ավելի խորը գիտակցել արդյունավետ կորպորատիվ կառավարման վերաբերյալ գիտելիքների և գործնական հմտությունների անհրաժեշտությունը.
- ավելի լավ հասկանալ կորպորատիվ կառավարման գործընթացի զանազան առաջնային մասնակիցների՝ բաժնետերերի, գլխավոր գործադիր պաշտոնյայի ղեկավարության ներքո գործող կառավարման գործադիր մարմնի և տնօրենների խորհրդի միջև փոխհարաբերությունները, որոնցով բնորոշվում են բաժնետիրական ընկերությունների գործունեության ուղղությունները և դրանց իրականացումը.
- խորացնել իրենց գիտելիքները կորպորատիվ կառավարման գործնական հարցերում, որոնց կիրառմամբ է, որ կարելի է ապահովել բաժնետերերի իրավունքների պաշտպանությունը և զարգացնել կորպորատիվ կառավարման այնպիսի հիմնարար դրույթներ, ինչպիսիք են հաշվետու լինելը և թափանցելիությունը.
- հստակեցնել կորպորատիվ կառավարման բնագավառում ուսումնասիրման համար անհրաժեշտ խնդիրները :

Կորպորատիվ կառավարումը իրենից ներկայացնում է օրենքների, կանոնակարգերի և համապատասխան մասնավոր փորձի այնպիսի համադրում, որը հնարավորություն է տալիս բաժնետիրական ընկերությանը ներգրավելով ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ծավալել արդյունավետ գործունեություն և գոյատևել՝ ստեղծելով մնայուն տնտեսական արժեքներ բաժնետերերի համար, հաշվի առնելով նրանց և ամբողջ հասարակության շահերը:

Արդյունավետ կորպորատիվ կառավարման գլխավոր առանձնահատկություններն են.

- թափանցելիությունը (համապատասխան ֆինանսական և գործնական տեղեկությունների հրապարակումը, կառավարման և վերահսկողության ներքին գործընթացները).
- բոլոր բաժնետերերի իրավունքների և արտոնությունների պաշտպանության և իրականացման ապահովումը.
- ընկերության ռազմավարությունը և հիմնական գործարար ծրագրերն ու որոշումները անկախաբար հաստատելու իրավասություն ունեցող տնօրենները.
- տնօրենները, որոնք իրավասու են նշանակել ղեկավար պաշտոնյաներին, վերահսկել նրանց գործունեությունը ամբողջությամբ, ինչպես նաև փոխել նրանց անհրաժեշտության դեպքում:

Կորպորատիվ կառավարման գործընթացում բաժնետերերն ունեն երեք հիմնական հետաքրքրություն՝ իրավունքներ, ռիսկ և արժեք: Եվ արդյունավետ կորպորատիվ կառավարման մոդելը պետք է այնպես կառուցվի, որ պաշտպանվեն բաժնետերերի իրավունքները, առավելագույնս նվազեցվի ռիսկը և մեծանա արժեքը ներդրումային գործընթացում: Հետևել այս դրույթին՝ կնշանակի խրախուսել արդյունավետ կորպորատիվ կառավարման փորձի ավելի լայն կիրառումը: Կորպորատիվ կառավարումը այն մասին է, թե ինչպես է կազմակերպությունը իրականացնում իր նպատակները: Այն իր մեջ ընդգրկում է կառավարման, բարոյական նորմերի, ապահովության, հայեցակետային դրույթների, ուղղվածության, ազդեցության և արժեքների տարրեր: Սեփականատերերը բաժնետոմսերի միջոցով ապահովում են ռեսուրսներ ընկերության ֆինանսավորման համար: Դրա դիմաց բաժնետերերը ստանում են շահույթ՝ շահաբաժինների և բաժնետոմսերի գնի աճի ձևով: Կորպորատիվ կառավարումը ենթադրում է այս փոխհարաբերությունը՝ արժեթղթերի սեփականատերերի շահերը պաշտպանելու և ֆինանսների կենսանշանակ ներհոսքը դեպի ձեռնարկություն ապահովելու համար:

## **1. Բաժնետիրական ընկերություններ**

Բաժնետիրական ընկերություն համարվում է այն իրավաբանական անձը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող որոշակի թվով բաժնետոմսերի: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ բաժնետերերը իրենց հերթին պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար: Ընկերության գործունեության արդյունքում կրած կորուստների համար բաժնետերերի պատասխանատվությունը սահմանափակվում է միայն իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքով: Ընկերությունն ունի գույք, որը տարանջատված է բաժնետերերին պատկանող գույքից:

Գոյություն ունեն երկու ձևի բաժնետիրական ընկերություններ՝ փակ և բաց:

Ընկերությունը փակ է համարվում այն դեպքում, երբ ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն իր հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև առանց բաժնետոմսերի բաց բաժանորդագրության: Փակ ընկերությունը իրավունք չունի իր կողմից թողարկված բաժնետոմսերը տեղաբաշխել բաց բաժանորդագրության միջոցով և առաջարկել դրանք անսահմանափակ թվով անձանց: Փակ ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 25 բաժնետեր: Եթե փակ ընկերության բաժնետերերի քանակը գերազանցում է 25-ը, ապա մեկ տարվա ընթացքում այն պետք է կամ վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ կրճատի բաժնետերերի քանակը:

Բաժնետիրական ընկերությունը բաց է համարվում այն դեպքում, երբ բաժնետերերը իրավունք ունեն վաճառել իրենց բաժնետոմսերը առանց ընկերության մնացած բաժնետերերի համաձայնության: Բաց բաժնետիրական ընկերությունը կարող է տեղաբաշխել իր կողմից թողարկված բաժնետոմսերը բաց և փակ բաժանորդագրության միջոցով:

Բաժնետիրական ընկերությունը իրավունք ունի տեղաբաշխել բաժնետոմսեր և պարտատոմսեր:

## **2. Բաժնետերերի իրավունքները**

Բաժնետերերը ընկերության սեփականատերերն են և նրանց առաջնահերթ խնդիրն է որպես սեփականատերեր պաշտպանել իրենց իրավունքները: Ընկերության կառավարման մարմինների և բաժնետերերի փոխհարաբերությունները էական նշանակություն ունեն ընկերության հաջող գործունեության համար: Ներդրողները պետք է հստակ և բավարար պատկերացում ունենան այն միջոցների վերաբերյալ որոնցով նրանք կկարողանան հսկել ընկերության կառավարման իրականացումը և մասնակցել կարևոր որոշումների ընդունմանը: Սովորական բաժնետոմսերը տնօրինող բոլոր բաժնետերերն ունեն միևնույն իրավունքները: Նրանք իրավասու են.

- քվեարկության ձայնի իրավունքով մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին,
- մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ ընկերության գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկություն, բացի գաղտնի փաստաթղթերից,
- լիազորել երրորդ անձին՝ ներկայացնելու իրենց իրավունքները բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- քվեարկել բաժնետերերի ժողովում, իրենց պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

- հայցով դիմել դատարան,
- ստանալ շահաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխված նոր բաժնետոմսեր,
- ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,
- ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր,
- վաճառել կամ այլ ձևով փոխանցել իրենց պատկանող բաժնետոմսերն այլ անձանց,
- օգտվել ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Ընկերությունը չի երաշխավորում սովորական բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումը:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկության ձայնի իրավունք չունեն, սակայն ընկերությունը պարտավոր է սահմանել ընկերության կողմից տեղաբաշխվող և հայտարարված յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսի դիմաց շահաբաժնի չափը և լուծարման արժեքը, որը վճարվում է ընկերության լուծարման դեպքում:

### **3. Փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանությունը**

Կորպորատիվ կառավարման ճշգրիտ սկզբունքները ներառում են նաև փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները հարգելու և պաշտպանելու ընթացակարգեր: Անհատ բաժնետերերը և փոքրամասնություն կազմող բաժնետերերի խմբերը պետք է խրախուսվեն տարեկան ժողովները հաճախելու և ընկերության գործունեության կամ քաղաքականության հետ չհամաձայնվելու դեպքում իրենց տեսակետը արտահայտելու գործում: Մա կորպորատիվ կառավարման կարևորագույն պայմաններից մեկն է:

Նույնիսկ այն ընկերություններում, որտեղ ղեկավարները տիրում են բաժնետոմսերի վերահսկող մեծամասնությանը, փոքր բաժնետերերը պետք է պնդեն, որ իրենց ձայնը նույնպես լսվի: Իրենց շահերը պաշտպանելու և ընկերության կառավարման վրա ազդելու առումով նրանք ունեն հետևյալ իրավունքները.

- Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի դատարանում գանգատարկել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ընդունված որոշումը, որտեղ խախտվել են օրենսդրության պահանջները կամ ընկերության կանոնադրությունը այն դեպքում, եթե տվյալ բաժնետերը չի մասնակցել ժողովին կամ քվեարկել է այդ որոշմանը դեմ:

- Բաժնետերերը կարող են պահանջել, որ ընկերությունը շուկայական գնով հետ գնի իրենց պատկանող բաժնետոմսերը այն դեպքում, եթե որոշում է ընդունվել ընկերության վերակազմավորման մասին, և նրանք կամ քվեարկել են ընկերության վերակազմավորմանը դեմ, կամ չեն մասնակցել քվեարկությանը, կամ ընկերության կանոնադրությունում լրացումներ և փոփոխություններ են արվել, կամ հաստատվել է կանոնադրության նոր տարբերակը, որի հետևանքով լրացուցիչ սահմանափակումներ են սահմանվել նրանց իրավունքների նկատմամբ, և բաժնետերերը կամ քվեարկել են դրա դեմ, կամ չեն մասնակցել քվեարկությանը:
- Ընկերության սովորական բաժնետոմսերի առնվազն 1% և ավելին տնօրինող բաժնետերերը իրավունք ունեն հայց ներկայացնել դատարան ընկերության Տնօրենների խորհրդի անդամների, Գործադիր մարմնի, վարչական աշխատողների դեմ՝ պահանջելով վերջիններիս կողմից ընկերությանը պատճառված վնասի փոխհատուցում:
- Առնվազն 2% քվեարկության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում ներկայացնել ոչ ավելի, քան 2 առաջարկ, ինչպես նաև թեկնածուներ առաջադրել Տնօրենների խորհրդի և Վերստուգող հանձնաժողովի անդամության համար:
- Քվեարկության ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 5% տնօրինող սեփականատերերը կարող են պահանջել արտաքին աուդիտորների կողմից ընկերության ֆինանսա-տնտեսական գործունեության ստուգման անցկացումը: Այս դեպքում աուդիտորների ծառայությունների դիմաց վճարում են աուդիտ պահանջած բաժնետերերը:
- Ընկերության առնվազն 10% քվեարկության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել արտահերթ ընդհանուր ժողովի հրավիրում:
- Ընկերության առնվազն 10% քվեարկության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը իրավունք ունեն Վերստուգող հանձնաժողովից պահանջել ընկերության ֆինանսա-տնտեսական գործունեության ստուգում: Ընկերության միջոցների անարդյունավետ, անազնիվ կամ ոչ պատշաճ օգտագործման փաստերի դեպքում Վերստուգող հանձնաժողովը իրավասու է հրավիրել ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

#### **4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (Որոշումների կայացման և քվեարկության կարգը)**

Բաժնետիրական ընկերությունում սովորաբար բաժնետերերի մեծամասնությունն է որոշում կորպորատիվ կառավարման կարևոր հարցերը և ընտրում ընկերության Տնօրենների խորհուրդ, որը վերահսկում է ընկերության գործունեությունը, նշանակում է ընկերության ընթացիկ կառավարումը իրականացնող պաշտոնյաներին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ընկերության կառավարման գերագույն մարմինն է: Ընկերությունը պետք է բաժնետերերի ընդհանուր ժողով (տարեկան ժողով) հրավիրի տարին մեկ անգամ: Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի 18 ամսից: Բացի տարեկան ժողովներից, հրատապ հարցերի քննարկման նպատակով կարող են հրավիրվել նաև արտահերթ ընդհանուր ժողովներ:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունների մեջ մտնում են ընկերության գործունեության այնպիսի կենսանշանակ հարցեր, ինչպիսիք են.

- ընկերության կանոնադրության հաստատումը, նրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության վերախմբագրված տարբերակի հաստատումը,
- ընկերության վերակազմավորումը,
- ընկերության լուծարումը, լուծարային հաշվեկշռի հաստատումը,
- ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը և նրա անդամների ընտրությունը,
- հայտարարված բաժնետոմսերի առավելագույն չափի սահմանումը,
- ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը կամ նվազեցումը,
- ընկերության Վերստուգող հանձնաժողովի ընտրությունը,
- արտաքին աուդիտորի հաստատումը,
- ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,
- բաժնետոմսի անվանական արժեքի փոքրացումը և մեծացումը,
- շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
- ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետզնումը,
- ընկերության մասնաճյուղերի, դուստր ձեռնարկությունների և ներկայացուցչությունների ստեղծումը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները սովորաբար ընդունվում են ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ: Ստորև բերված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման համար պահանջվում է բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցող և քվեարկության ձայն ունեցող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 75%-ով.

- ընկերության վերակազմավորումը,

- ընկերության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- ընկերության լուծարումը, Լուծարային հանձնաժողովի նշանակումը, ընկերության լուծարային հաշվեկշռի հաստատումը,
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի որոշումը,
- խոշոր գործաքների կնքումը այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքը ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելի է:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավասու չէ փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ կայացնել օրակարգում նախապես չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի հրավիրման, հեռակա քվեարկության միջոցով: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը համարվում է կայացած այն դեպքում, եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են այն բաժնետերերը, ովքեր համատեղ տիրապետում են քվեարկության ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի ավելի քան 50% -ը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունը անց է կացվում «ընկերության քվեարկության մեկ ձայնի իրավունք տվող մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ ընկերության Տնօրենների խորհրդի անդամների ընտրության դեպքի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը, որը նկարագրված է սույն գլխի հաջորդ բաժնում: Քվեարկությունը ոչ միայն պարզապես բաժնետերերի կամքի արտահայտման քայլ է, այլ շահառուների շահերի արտահայտման էական գործիք:

Բաժնետերերի քվեարկության գաղափարը ենթադրում է լուրջ պատասխանատվություն: Դրա նպատակն է պաշտպանել բաժնետերերի իրավունքները, վերջիններիս համար առավելագույնս նվազեցնելով ռիսկը և ավելացնելով գույքային արժեքները:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթիվը: Նոր ժողովի քվորումը համարվում է կայացած, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են քվեարկության ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի ավելի քան 30%-ին տիրող բաժնետերերը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք տեղի են ունենում ի լրումն բաժնետերերի տարեկան ժողովին, համարվում են արտահերթ ժողովներ: Արտահերթ ժողովները հրավիրվում են հրատապ հարցերի քննարկման համար:

Արտահերթ ժողովները հրավիրվում են ընկերության Տնօրենների խորհրդի նախաձեռնությամբ՝ նրա կողմից ընդունված որոշման համաձայն, Վերստուգող հանձնաժողովի, արտաքին աուդիտորի կամ ընկերության քվեարկության ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 10%-ին տիրող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Ավելի քան 25 քվեարկության ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի սեփականատերեր ունեցող ընկերությունում ստեղծվում է Հաշվիչ հանձնաժողով: Ընդհանուր ժողովը հաստատում է Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը (ոչ պակաս, քան 3 անդամ) և նրա անդամներին: Հաշվիչ հանձնաժողովը որոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրում է ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեարկության կարգը, ապահովում է բաժնետիրոջ քվեարկությանը մասնակցելու իրավունքը և քվեարկության սահմանված ընթացակարգը, կատարում է ձայների հաշվառումը, ամփոփում է քվեարկության արդյունքները, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների մասին և հանձնում է քվեաթերթիկները ընկերության արխիվ:

Հինգ հարյուրից ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բաժնետերեր ունեցող ընկերությունում Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների կատարումը կարող է դրվել մասնագիտացված գրանցողի վրա:

## **5. Ընկերության Տնօրենների Խորհուրդը և նրա ընտրությունները**

Ընկերության Տնօրենների Խորհուրդը իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր կառավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը: Տնօրենների Խորհրդի առաջնային պարտականությունն է ապահովել ընկերության երկարաժամկետ հաջող գործունեության իրականացումը՝ բաժնետերերի հանդեպ ունեցած հոգեբարձուական իրավասությանը համապատասխան: Տնօրենների Խորհրդի հիմնական խնդիրն է պապանել և ավելացնել ընկերության սովորական բաժնետոմսերի շուկայական գինը: Տնօրենների Խորհուրդը սահմանում է ընկերության ռազմավարական խնդիրները, որոշում է ներդրումային քաղաքականությունը, համաձայնեցնում է գործունեության չափանիշները և Գործադիր մարմնին է փոխանցում այդ քաղաքականության իրականացման մարամասն պլանը՝ հաշվի առնելով ռիսկի համապատասխան գործոնները: Տնօրենների Խորհուրդը վերահսկում է ընկերության գործունեության համապատասխանությունը մշակված քաղաքականությանը և նպատակների իրականացումը՝ Գործադիր մարմնի իր գործունեության վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների ուսումնասիրման և վերահսկման միջոցով:

Տնօրենների Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

- ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրումը և դրա օրակարգի հաստատումը,
- պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- ընկերության ակտիվների շուկայական արժեքի որոշումը,

- ընկերության Գործադիր մարմնի ձևավորումը և լիազորությունների դադարեցումը,
- տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,
- ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը:

Տնօրենների Խորհրդի անդամները ընտրվում են ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամկետով: Տնօրենների Խորհրդի անդամի լիազորությունների ընդհանուր ժամկետը չի սահմանափակվում:

Ընկերության քվեարկության ձայնի իրավունք տվող սովորական բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրող բաժնետերերը իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Տնօրենների խորհրդի կազմում: Յուրաքանչյուր բաժնետեր Տնօրենների Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Հինգ հարյուրից ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերեր ունեցող ընկերությունում Տնօրենների Խորհրդի ընտրությունները իրականացվում են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ: Դա նշանակում է, որ քվեարկող բաժնետերը կարող է բազմապատկել իր ձայները Տնօրենների խորհրդի անդամության թեկնածուների թվով: Օրինակ, եթե պետք է ընտրվեն երեք անդամներ և բաժնետերը ունի 10 բաժնետոմս, ապա նա ընդամենը կունենա 30 ձայն (10 ձայն՝ անդամության յուրաքանչյուր թեկնածուի համար): Գումարային քվեարկության ժամանակ քվեարկության ձայն ունեցող յուրաքանչյուր բաժնետոմս ունի տնօրենների խորհրդում ընտրվող (վերընտրվող) անդամների քանակին հավասար ձայների քանակ: Բաժնետերը իրավունք ունի իր ունեցած ձայները տալ մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև իր հայեցողությամբ: Այն թեկնածուները, որոնք կատանան ձայների առավելագույն քանակ, սակայն ոչ պակաս քան ժողովում ներկայացված ձայների պարզ մեծամասնությունը, համարվում են ընտրված: Մեր օրինակի դեպքում բաժնետերը կարող է իր 30 ձայնն էլ տալ մեկ թեկնածուին կամ բաշխել երեք թեկնածուների միջև իր ուզած համամասնությամբ:

Բաժնետոմսերի և Տնօրենների Խորհրդի անդամների քանակին համապատասխան, փոքրամասնություն կազմող բաժնետերերը կարող են ներկայացուցչության իրավունք ձեռք բերել Տնօրենների Խորհրդում:

Հինգ հարյուրից ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերեր ունեցող ընկերությունում Տնօրենների Խորհուրդը պետք է բաղկացած լինի առնվազն 7 անդամից: Այն անձինք, որոնք ընկերության բաժնետեր չեն կամ չեն ծառայում սովյալ ընկերությունում, նույնպես կարող են լինել Տնօրենների Խորհրդի անդամ այն դեպքում, եթե ընկերության կանոնադրությամբ դա չի արգելվում:

Տնօրենների Խորհրդի անդամները իրենց կազմից ընտրում են Տնօրենների խորհրդի նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Տնօրենների խորհրդի նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը, նախագահում է բաժնետերերի ընդհանուր ժողովներում: Հինգ հարյուրից ավելի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերեր ունեցող ընկերությունում Տնօրենների խորհրդի նախագահի և ընկերության Գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնները չեն կարող համատեղվել:

Տնօրենների Խորհրդի ոռշումները ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Տնօրենների Խորհրդի մեկ անդամից մյուսին արգելվում է: Տնօրենների Խորհրդի նիստի քվորումը չի կարող պակաս լինել Խորհրդի անդամների թվի կեսից:

## **6. Ընկերության Վերստուգող Հանձնաժողովը**

Վերստուգող հանձնաժողովը ընկերության ներքին աուդիտային մարմին է, որն օժտված է ներքին վերստուգողի լիազորություններով՝ իրականացվող օպերատիվ գործունեության արդյունավետությունը և ֆինանսական վերահսկման համակարգերը քննելու և գնահատելու համար, այդ ասպարեզում առկա էական թերությունները, անհամապատասխանությունները և ընկերության զարգացման համար անհրաժեշտ պահանջները Տնօրենների Խորհրդի և բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Վերստուգող հանձնաժողովի անդամները իրականացնում են ներքին աուդիտի ֆունկցիաներ: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է ներգրավել համապատասխան որակավորում և փորձ ունեցող ծառայողների կամ արտաքին աուդիտորների՝ նախապես սահմանված և նրանց հետ համաձայնեցված պայմաններով: Վերստուգող հանձնաժողովը կարող է քննել ընկերության ֆինանսական հարցերին վերաբերող ցանկացած դեպք, ներառյալ տարեկան հաշվետվությունների ուսումնասիրումը, ֆինանսական ներքին վերահսկողության ընթացակարգերը, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ընկերության գործունեության համապատասխանության և կանոնակարգման դեպքերը, արտաքին աուդիտորների ներգրավման հարցերը և այլն: Վերստուգող հանձնաժողովը պարբերաբար հանդիպումներ է ունենում ընկերության ղեկավարության և արտաքին անկախ աուդիտորների հետ՝ հաշվապահական, ներքին ֆինանսական կարգապահության և ֆինանսական հաշվետվության հարցերի քննարկման համար:

Վերստուգող հանձնաժողովը հետևում է պատշաճ և համապատասխան ներքին ֆինանսական վերահսկողության իրականացմանը, կանոնադրական և ֆինանսական ռիսկերի բացահայտմանը, դրանց վերահսկմանը և կառավարմանը, գործադիր կառավարման մարմնի հաշվետու լինելու համապատասխան ստանդարտների պահպանմանը: Վերստուգող հանձնաժողովը նաև խորհուրդներ է տալիս Տնօրենների Խորհրդին և բաժնետերերի ընդհանուր ժողովին ֆինանսական տեղեկատվությանը վերաբերող հարցերում:

Վերստուգող հանձնաժողովը հետևում է ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների իրականացմանը և ընկերության ներքին փաստաթղթերի համապատասխանությանը գործող օրենքներին ու օրենսդրական ակտերին, ինչպես նաև ընկերության կանոնադրությանը: Հանձնաժողովի պահանջով ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող ցանկացած փաստաթուղթ, նյութ կամ բացատրագիր պետք է պարտադիր կերպով ներկայացվի վերջինիս:

Վերստուգող հանձնաժողովը իրավասու է իր նախաձեռնությամբ, բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ Տնօրենների Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև ընկերության քվեարկության ձայն ունեցող բաժնատոմսերի առնվազն 10%-ին տիրող բաժնետերերի պահանջով իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ստուգում: Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրում:

Հանձնաժողովի անդամները ընտրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովում 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովը պետք է բաղկացած լինի առնվազն 3 անդամից: Հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հիմնվելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների վրա Վերստուգող հանձնաժողովը եզրակացություն է կազմում դրանց վերաբերյալ և ներկայացնում դրանք բաժնետերերի ընդհանուր ժողովին: Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է ընդհանուր ժողովի կողմից ընկերության տարեկան հաշվեկշռի և այլ ֆինանսական հաշվետվությունների հաստատման համար:

## **7. Ընկերության Գործադիր Մարմինը**

Ընկերության ընթացիկ գործունեության կառավարումը իրականացվում է ընկերության Գործադիր մարմնի կողմից՝ ի դեմս Տնօրենի (Գլխավոր Տնօրենի) կամ Տնօրենի՝ ընկերության վարչության հետ համատեղ: Գործարարության գործընթացն այսօր բարդացել է, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել ազգային և միջազգային գործոնները, բարեփոխումների խթանումը, մրցակցության նոր ձևերը, ծախսերը և կուլտուրան:

Փորձառու և հմուտ տնօրենների ներգրավումը կարող է բարելավել այն որոշումների որակը, որոնք կանխորոշում են բաժնետիրական ընկերությունների գործունեության ապագա հաջողությունը և նույնիսկ կենսունակությունը:

Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և վերջինիս լիազորությունների դադարեցումը կատարվում է ընկերության Տնօրենների խորհրդի որոշման համաձայն: Գործադիր մարմինը կազմակերպում է ընդհանուր ժողովի կամ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը, իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության կառավարումը:

Ընկերության Տնօրենը.

- տնօրինում է ընկերության գույքը, ներառյալ ֆինանսական միջոցները,
- գործարքներ է կատարում ընկերության անունից,
- ներկայացնում է ընկերությունը,
- տալիս է լիազորագրեր, կնքում է պայմանագրեր, բանկերում բացում էլ հաշիվներ,
- Տնօրենների Խորհրդի հաստատմանն է ներկայացնում է ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, տալիս է հրամաններ, հանձնարարականներ
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային :

Ընկերության գործադիր մարմնի լիազորությունների շրջանակը ներառում է կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ այն հարցերի, որոնք, համաձայն ընկերության կանոնադրության, պատկանում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ ընկերության Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը: Ընկերության Տնօրենների Խորհրդի նախագահը պայմանագրեր է կնքում Տնօրենի և վարչության անդամների հետ: Եթե միևնույն անձը զբաղեցնում է Տնօրենների Խորհրդի նախագահի և Տնօրենի պաշտոնները, ապա Տնօրենի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի անդամներից որևէ մեկը՝ համաձայն ընկերության խորհրդի որոշման, իսկ Վարչության անդամների հետ պայմանագրերը կնքվում են ընկերության Խորհրդի նախագահի կողմից:

## **8. Տեղեկությունների Հրապարակում**

Բաժնետերերի հետ արդյունավետ հաղորդակցությունը կորպորատիվ լավ կառավարման կենսանշանակ բաղադրիչներից է: Իրենց գործունեության մասին տեղեկատվությունը ներդրողների և բաժնետերերի համար ավելի մատչելի դարձնելու նպատակով բաժնետիրական ընկերությունները պետք է որոշակի ժամանակահատվածում իրենց բաժնետերերին ներկայացնեն աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Տեղեկատվության հրապարակման համապատասխան կանոնակարգերը ոչ միայն կարգավորում են արժեթղթերի շուկայի գործունեությունը, այլ նաև նպատակ ունեն ներդրողներին պաշտպանել այնպիսի անազնիվ գործունեից, ինչպիսիք են «ինսայդեր առուվաճառքը» (արժեթղթերի վաճառքը գաղտնի տեղեկությունների տիրապետող անձանց կամ կազմակերպությունների կողմից) և ապակողմնորոշիչ ազդագրերի կամ այլ փաստաթղթերի թողարկումը:

Բոլոր բաժնետիրական ընկերությունները պարտավոր են ամեն տարի որոշակի տեղեկատվություն, աուդիտորական եզրակացություններ և հաշվետվություններ հրապարակել ազգային թերթերում: Դա կարող է լինել տեղեկատվություն ընկերության կապիտալի կառուցվածքի, կառավարման ու գործունեության, տնօրինությանը պատկանող մասնաբաժինների, աուդիտ անցած տարեկան հաշվետվությունների, ընկերության խոշոր ձեռքբերումների և ձախողման դեպքերի մասին: Ֆինանսական հաշվետվությունները պետք է արտացոլեն ընկերության ֆինանսական դրության «ճշմարիտ և արդար» պատկերը: Տեղեկատվությունը, ներառյալ ֆինանսական հաշվետվությունները, պետք է մատչելի լինի հանրության համար:

Ֆինանսական հաշվետվությունը հիմնականում ներառում է հաշվապահական հաշվեկշիռը, եկամուտների մասին հաշվետվությունը, չբաշխված շահույթի բաշխման մասին հաշվետվությունը: Որոշ երկրներում ֆինանսական հաշվետվություններում տրվում է տեղեկատվություն ընկերության տնտեսական և ֆինասական վիճակի, նախատեսված զարգացումների և ներդրումային ծրագրերի չափի ու արդյունքների, հիմնական ակտիվների դրության ու շարժի, կանոնադրական կապիտալի տեսակի ու արժեքի, սեփական բաժնետոմսերի անվանական արժեքի, ընկերության լուծարային արժեքի և աշխատուժի մասին: Երբեմն պահանջվում է հրապարակել նաև չբաշխված շահույթի բաշխման ժամանակացույցը և արտադրված ապրանքների արժեքը:

ՀՀ օրենսդրությունը նույնպես պահանջում է, որ բաժնետիրական ընկերությունները մամուլում հրապարակեն իրենց ֆինանսական տարվա վերջին ներկայացվող հաշվետվությունը: Հաշվապահական հաշվեկշիռն ու Շահույթի և վնասի մասին հաշվետվությունը պետք է ներառվեն բաժնետերերի համար կազմվող տարեկան հաշվետվություններում: Աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա վերջին՝ համաձայն համապատասխան պահանջների: Պատճենները պետք է ուղարկվեն բաժնետերերին միևնույն ժամանակահատվածում: Չնայած այն բանին, որ Հայաստանում արդեն կիրառվում են միջազգային հաշվապահական ստանդարտները, նրանք դեռևս պարտադիր բնույթ չեն կրում:

Տեղեկատվության հրապարակման փորձն ու պահանջները տարբեր երկրներում տարբեր են և ներկայումս էլ գտնվում են էական բարեփոխումների փուլում, այն ավելի մատչելի դարձնելու տեսանկյունից, ինչը ակնակալում են այն օգտագործողները, երբ որոշումներ են կայացնում տվյալ ընկերության հետ իրենց ապագա փոխհարաբերությունների վերաբերյալ: Կորպորատիվ կապերը և տեղեկատվության հրապարակման համար ներկայացվող պահանջները վերափոխվում են թղթային ձևից էլեկտրոնայինի: Վերջին տարիներին նշանակալից բարեփոխումներ են տեղի ունեցել բաժնետերերին հաշվետվությունների ներկայացման գործում:

Այս առումով շատ կարևոր է լիարժեք ըմբռնել ընկերությունների գործունեության հրապարակայնության և հաղորդակցման ռազմավարության բարելավման իրականացմանն ուղղված բարեփոխումների նշանակությունը և դրանով իսկ բարձրացնել գործարար շրջանների հեղինակությունը: Ընկերության տնօրինության և ինստիտուցիոնալ բաժնետերերի միջև կապերը զգալիորեն բարելավվել են: Այդ կապերը կարող են ծառայել որպես կորպորատիվ լավ կառավարման ուղեցույց՝ որպես կապիտալ հատկացնողների և այն օգտագործողների միջև էական նշակակություն ունեցող փոխհարաբերությունների բարելավման օրինակ: Հաշվետվությունների ներկայացման հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է կորպորատիվ գործունեության վրա՝ այն կատարելագործելու միտումով: Տեղեկատվության հրապարակման կարևորությունը կայանում է մի կողմից հաշվետվությունների ներկայացման և հաշվետու լինելու, և մյուս կողմից բարգավաճման և արժեքների ստեղծման միջև կառուցողական համակշիռ ապահովելու մեջ:

## 9. Խոշոր գործարքներ

Կորպորատիվ կառավարման հարցերը ներառում են նաև ընկերության գույքի ձեռքբերման և վաճառքի հետ կապված խոշոր գործարքների իրականացման համար սահմանված կանոնակարգերը, որոնք կարևոր նշանակություն ունեն ընկերության ֆինանսա-տնտեսական գործունեության իրականացման համար: Խոշոր են համարվում հետևյալ գործարքները.

- մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ընկերության կողմից գույքի ձեռք բերման կամ օտարման հետ, որոնց արժեքը կազմում է գործարքի իրականացման մասին որոշման ընդունման պահի դրությամբ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 կամ ավելի տոկոսը:
- մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ընկերության սովորական կամ սովորական բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման հետ, որոնց արժեքը կազմում է ընկերության արդեն տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային անվանական արժեքի 25 և ավելի տոկոսը:

Եթե գործարքի իրականացման մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ գործարքի առարկա հանդիսատղ գույքի արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ը, ապա տվյալ գործարքի մասին որոշումը պետք է կայացվի ընկերության Տնօրենների խորհրդի կողմից միաձայն:

Այն դեպքում, երբ գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ը, ապա գործարքի իրականացման մասին որոշումը պետք է ընդունվի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 75%-ով: Օրինակ, եթե \$1.000.000 հաշվեկշռային արժեքով գույք ունեցող ընկերությունը ցանկանում է վաճառել իր շենքերի ու սարքավորումների մի մասը, որը չի օգտագործվում և որի շուկայական արժեքը \$600.000 է (այսինքն գերազանցում է ընկերության գույքի հաշվեկշռային արժեքի 50%-ը), ապա գործարքի իրականացման մասին որոշումը պետք է ընդունվի ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով:

## **10. Շահագրգռվածությունը գործարքներում**

Երբ ընկերության հետ գործարքի մեջ են ներգրավվում շահագրգիռ անձինք, ապա որոշակի միջոցներ պետք է ձեռնարկվեն շահերի բախումից խուսափելու համար: Շահագրգիռ կողմ են համարվում հետևյալ անձինք.

- Տնօրենների խորհրդի անդամ հանդիսացող անձը
- ընկերության գործադիր մարմնում ընդգրկված անձը
- այն բաժնետերը կամ բաժնետերերի խումբը, որոնք տիրում են ընկերության քվեարկության ձայն ունեցող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին այն դեպքում, երբ տվյալ անձինք, նրանց ծնողները, ամուսինները, զավակները, եղբայրները, քույրերը, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձինք տվյալ գործարքի մասնակից կողմը, գործակալը կամ ներկայացուցիչն են (օրինակ, երբ ընկերությունը պատրաստվում է գործարք իրականացնել մեկ այլ ընկերության հետ, որի տնօրենը խորհրդի նախագահի կամ խորհրդի որևէ անդամի եղբայրն է կամ ընկերության տնօրենի որդին):

Գործարքի մեջ ներգրավված անձինք պարտավոր են տեղեկացնել Տնօրենների խորհրդին, Վերստուգող հանձնաժողովին և աուդիտ իրականացնող անձին գործարքում շահագրգռվածության առկայության մասին: Նրանք պետք է հայտնեն այն մասին, որ իրենք կամ իրենց ազգականները իրականացվելիք գործարքի մեջ շահագրգիռ անձինք են հանդիսանում:

Հինգ հարյուրից պակաս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերեր ունեցող ընկերությունում շահագրգիռ անձանց մասնակցությամբ գործարքի իրականացման մասին որոշումը ընդունվում է ընկերության Տնօրենների խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, որոնք տվյալ գործարքի մեջ շահագրգիռ անձինք չեն:

Հինգ հարյուր և ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերեր ունեցող ընկերությունում շահագրգիռ անձանց մասնակցությամբ գործարքի իրականացման մասին որոշումը ընդունվում է ընկերության Տնօրենների խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ (որոնք ընկերության գործադիր տնօրեն կամ վարչության անդամ չեն հանդիսանում):

Եթե շահագրգռվածության առկայությամբ իրականացվող գործարքի շուկայական արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 2%-ը, ապա որոշումը գործարքի վերաբերյալ ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ գործարքի մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Այն անձը, որը ճանաչվում է շահագրգիռ տվյալ գործարքի մեջ, պատասխանատվություն է կրում ընկերության հանդեպ այն հնարավոր կորստի չափով, որը կարող է պատճառվել ընկերությանը տվյալ գործարքի հետևանքով: Եթե պատասխանատվություն են կրում մեկից ավելի անձինք, ապա ընկերության հանդեպ նրանց պատասխանատվության չափը համամասնորեն պետք է բաշխվի նրանց միջև:

## **11. Շահաբաժինների վճարման կարգն ու սահմանափակումները**

Շահաբաժինը ընկերության շահույթի այն մասն է, որը վճարվում է նրա կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերին: Քանի որ բաժնետերերը հանդիսանում են տվյալ գործի սեփականատերերը, ապա նրանք իրավունք ունեն ստանալու շահույթի իրենց բաժինը, որը վճարվում է շահաբաժնի ձևով և սովորաբար արտահայտվում է մեկ բաժնետոմսին համամասն չափով, քանի որ այն ընդհանուր գումարը, որը ստանում է բաժնետերը, արտացոլում է նրա բաժնեմասը ընկերությունում: Եթե բաժնետերը տիրում է բաժնետոմսերի փոքր քանակի, ապա նա կստանա համապատասխանաբար շահույթի փոքր մասը:

Ընկերությունը իրավունք ունի հայտարարել շահաբաժինների վճարման մասին ամեն եռամսյակ, կիսամյակ կամ տարի: Շահաբաժինները վճարվում են ընկերության տվյալ տարվա ընթացիկ գուտ շահույթից՝ դրամով:

Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահաբաժինները կարող են վճարվել ընկերության կողմից հատուկ այդ նպատակով ստեղծված ֆոնդից: Ընկերության Տնօրենների խորհուրդը որոշում է կայացնում միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահաբաժինների վճարման մասին: Տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշումը ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերությունը իրավունք չունի հայտարարել շահաբաժինների վճարման մասին այն դեպքում, եթե.

- ընկերության կանոնադրական կապիտալը լիովին վճարված չէ,
- շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունման պահի դրությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել,
- ընկերությունը ամբողջովին հետ չի գնել հետգնման ենթակա իր բաժնետոմսերը,
- ընկերության գուտ ակտիվների արժեքը փոքր է ընկերության կանոնադրական կապիտալից և պահուստային ֆոնդից, կամ կարող է նվազել վճարման հետևանքով:

Տարեկան շահաբաժինների վճարման ամսաթիվը որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի շահաբաժինների վճարման մասին որոշմամբ: Միջանկյալ շահաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Տնօրենների խորհրդի միջանկյալ շահաբաժինների վճարման մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

## **12. Ընկերության բաժնետերերի ռեեստրը**

Բաժնետիրական ընկերությունը վարում է բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստր, որտեղ նշվում են բաժնետերերի մասին հետևյալ տվյալները.

- անուն, ազգանունը, անձնագրի տվյալները և փոստային հասցեն այն դեպքում, երբ բաժնետերը ֆիզիկական անձ է,
- լրիվ անվանումը, իրավաբանական ու փոստային հասցեները, բանկային հաշվի համարը այն դեպքում, երբ բաժնետերը իրավաբանական անձ է,
- արժեթղթերի քանակը ըստ տեսակների և ձևերի, ներառյալ լրիվ վճարվածը,
- բաժնետոմսերի (և այլ արժեթղթերի) ձեռք բերման ամսաթիվը և հիմքերը,
- ռեեստրի մեջ գրանցման ամսաթիվը:

Ընկերությունը պետք է ապահովի բաժնետերերի ռեեստրի պահպանումն ու վարումը ընկերության պետական գրանցման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում: Ընկերության ռեեստրը պահպանվում կամ վարվում է ընկերության կամ նրա հանձնարարությամբ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից:

Ռեեստրի վարումն ու պահպանումը ընկերության հանձնարարականով մասնագիտացված կազմակերպության կողմից իրականացման դեպքում ընկերությունը չի ազատվում այն վարելու և պահպանելու համար օրենսդրորեն սահմանված պատասխանատվությունից:

Եթե բաժնետերերը իրենց վերաբերվող տվյալների փոփոխման մասին տեղյակ չեն պահում, ապա ընկերությունը և ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում տվյալ բաժնետերերին պատճառված վնասի համար:

Բաժնետիրոջ պահանջով ընկերության ռեեստրավարը պետք է հաստատի բաժնետիրոջ սեփականության իրավունքը՝ նրան ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով: